

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի 2017թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Վերլուծելով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի 2017 թվականի ֆինանսական տարվա գործունեության արդյունքները, անհրաժեշտ է նշել, որ 2017 թվականին արձանագրված միջազգային և ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների վատթարացման պայմաններում բանկը, օգտագործելով իր կողմից կիրառվող բանկային նորագույն տեխնոլոգիաները, ունենալով արհեստավարժ մասնագետներով հագեցած համախոհների թիմ, ապահովեց իր գործունեության կայունությունն ու հիմնական ցուցանիշների դրական դինամիկան, ինչը վկայում է Բանկի գործունեության կայունության, արդյունավետության և ստեղծված իրավիճակում՝ Բանկի մենեջմենթի կողմից ճիշտ ռազմավարության ընտրության փաստը:

2017 թվականի հունվարի 1-ից ՀՀ ԿԲ նորմատիվային փոփոխությունների արդյունքում ՀՀ բանկային համակարգում ձևավորված մեծ ծավալի իրացվելի միջոցների առկայության և ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների կողմից բանկային ծառայությունների մատուցման շրջանակի ընդլայնման արդյունքում ՀՀ բանկային համակարգում մրցակցությունն էլ ավելի խորացավ: Այս պայմաններում իր մարցակցային դիրքը պահպանելու և ամրապնդելու նպատակով 2017 թվականի ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն իրականացրեց կառուցվածքային փոփոխություններ՝ ստեղծելով Ներդրումային բանկային ծառայությունների և ԹՎային բանկային ծառայությունների մատուցման դեպարտամենտներն ու ընդլայնելով մատուցվող ծառայությունների շրջանակը: Սկիզբ է դրվել մի շարք նոր ծրագրային ապահովումների մշակմանը:

2017 թվականին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն հաջողությամբ ավարտեց 14.12.2016թ Միացման պայմանագրով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ին միացած «Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ի հետ ինտեգրման գործընթացը:

2017թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ակտիվները կազմել են 212.4 մլրդ ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 42.4%-ով (63.3 մլրդ ՀՀ դրամով):

Այդ թվում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ Հաճախորդներին տրված վարկերը և այլ փոխառությունները աճել են 80.2%-ով (53.0 մլրդ ՀՀ դրամով), Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները՝ 8.7%-ով (2.3 մլրդ ՀՀ դրամով), Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները կրճատվել են 6.4%-ով (849 մլն ՀՀ դրամով), Դրամական միջոցները և դրանց համարժեքները կրճատվել են 1.5%-ով (573 մլն ՀՀ դրամով), Հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվներն ավելացել են 126.4%-ով (3.2 մլրդ. ՀՀ դրամով) և Այլ ակտիվները աճել են 141.9%-ով (1,3 մլրդ. ՀՀ դրամով):

2017 թվականի ընթացքում ապահովվել է հաճախորդներին տրված վարկերի ծավալների բնականոն աճ՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդները կազմելով

119.2 մլրդ ՀՀ դրամ: 2016թ ցուցանիշի համեմատ աճը կազմել է 80.2% (53.0 մլրդ. ՀՀ դրամ):

Նախորդ ֆինանսական տարվա համեմատ 2017թ-ին ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի ծավալն աճել է 113.7%-ով կամ 22.7 մլրդ ՀՀ դրամով՝ կազմելով 42.6 մլրդ ՀՀ դրամ, անհատ ձեռնարկատերերին տրված վարկերի ծավալը՝ 14.3%-ով կամ 1.1 մլրդ ՀՀ դրամով՝ կազմելով 8.9 մլրդ ՀՀ դրամ, իսկ իրավաբանական անձանց տրված վարկերի ծավալը՝ 73.9%-ով կամ 29.6 մլրդ ՀՀ դրամով՝ կազմելով 69.6 մլրդ ՀՀ դրամ:

Բանկի ղեկավարությունը, կարևորելով միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցությունը, մշտապես առաջնային դեր է հատկացնում դրանց խորացմանը և ընդլայնմանը:

2017 թվականի ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ը շարունակեց ակտիվ համագործակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ:

Բանկն ակտիվորեն համագործակցում է Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (EBRD), Համաշխարհային Բանկի (WB), Եվրասիական Զարգացման Բանկի (EAB), Առևտրի և Զարգացման Սևծովյան Բանկի, Հարավարևելյան Եվրոպայի Եվրոպական Հիմնադրամի (EFSE), Գերմանահայկական Հիմնադրամի (KfW), Green for Growth Fund Հիմնադրամի, Incofin Investment Management, DEUTSCHE INVESTITIONS-UND ENTWICKLUNGSGESELLSCHAFT MBH ներդրումային կազմակերպության (DEG), responsAbility Global Microfinance Fund, Blue Orchard, Նիդերլանդների զարգացման ֆինանսական ընկերության (FMO), The OPEC Fund for International Development (OFID) ինչպես նաև այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ:

2017թ Բանկը շարունակեց փաստաթղթային գործիքների թողարկումը և կարճաժամկետ վերականգնվող վարկերի տրամադրումը՝ ուղղված ներմուծման և արտահանման գործարքների ֆինանսավորմանը:

«Global Finance» միջազգային հեղինակավոր ամսագրի մասնագիտական ուսումնասիրության արդյունքում, ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ ճանաչվել է Հայաստանում 2017թ.-ի «Առևտրի լավագույն ֆինանսավորող» բանկը:

2017 թվականի ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ն իր ներդրումային քաղաքականության շրջանակներում շարունակեց ակտիվ գործունեությունը արժեթղթերի շուկայում՝ ապահովելով համապատասխան ցուցանիշների շարունակական աճ:

2017 թվականի վերջի դրությամբ արժեթղթերում Բանկի ներդրումային պորտֆելը կազմեց 29.2 մլրդ ՀՀ դրամ, որի կազմում 88.4%-ը ՀՀ պետական պարտատոմսերն են, 11.3%-ը՝ ոչ պետական պարտատոմսերը, իսկ 0.3%-ը՝ կորպորատիվ բաժնետոմսերը:

2017 թվականին Բանկի կողմից արժեթղթերի առաջնային շուկայում կատարված գործառնությունների ծավալը կազմեց 42.1 մլրդ ՀՀ դրամ, իսկ երկրորդային շուկայում՝ 157.0 մլրդ ՀՀ դրամ:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից ստացված եկամուտները, որոնց մեջ ավելի քան 88%-ը կազմում են պետական պարտատոմսերը, կազմել են 687.6 մլն ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 378.4 մլն ՀՀ դրամով, կամ 122.3%-ով:

Աշխարհաքաղաքական ստեղծված զարգացումների և տնտեսության համակարգային բարձր ռիսկերի պայմաններում Բանկը պահպանել է միջոցների տեղաբաշխման զգուշավոր քաղաքականությունը՝ միջոցները տեղաբաշխելով առավել ցածր ռիսկային և բարձր իրացվելի գործիքներում, այդ թվում՝ միջբանկային վարկերում:

2017թ ընթացքում Բանկը իրականացրել է բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների վարկավորում՝ ընդհանուր 3.2 մլրդ ՀՀ դրամ գումարի չափով:

2017թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի պարտավորությունները կազմել են 177.3 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 52.8%-ով կամ 5.1 մլրդ. ՀՀ դրամով:

Նախորդ տարվա համեմատ պարտավորությունների աճը պայմանավորված է Բանկերի նկատմամբ պարտավորությունների 47.3% կամ 1.2 մլրդ ՀՀ դրամ, Հաճախորդների ընթացիկ հաշիվների և ավանդների 52.4% կամ 32.9 մլրդ ՀՀ դրամ, Ածանցյալ ֆինանսական պարտավորությունների 3.8 անգամ կամ 2.4 մլն ՀՀ դրամ, Թողարկված պարտքային արժեթղթերի 129% կամ 4.9 մլրդ ՀՀ դրամ, Այլ փոխառություններ հոդվածի գծով 46.2% կամ 21.1 մլրդ ՀՀ դրամ, Ընթացիկ հարկային պարտավորությունների 11.8 անգամ կամ 247 մլն ՀՀ դրամ և Այլ պարտավորությունների 90.7% կամ 868 մլն ՀՀ դրամ աճով:

Տարեվերջին Բանկի կողմից միջազգային ֆինանսական կազմակերպություններից և ոչ ռեզիդենտ բանկերից ներգրավված փոխառությունները կազմել են 61 մլրդ ՀՀ դրամ կամ պարտավորությունների 34.4%-ը: Բանկի համար մշտապես առանցքային դեր և նշանակություն ունի միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցության խորացումն ու ընդլայնումը:

Պարտավորությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեն նաև Հաճախորդների ընթացիկ հաշիվները և ավանդները՝ 54% կամ 95.8 մլրդ դրամ, որոնք իրենց մեջ ներառում են իրավաբանական և ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդները, ՀՀ կառավարության և տեղական ֆինանսական կազմակերպությունների ընթացիկ հաշիվները, ավանդները և փոխառությունները:

Պարտավորությունների կազմում զգալիորեն աճել են նաև Բանկի կողմից թողարկված արժեթղթերով ներգրավված միջոցները՝ 129%-ով կամ 4.9 մլրդ ՀՀ դրամով՝ տարվա վերջի դրությամբ կազմելով 8.7 մլրդ ՀՀ դրամ կամ Պարտավորությունների 4.9%-ը:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն, կարևորելով տնտեսության ֆինանսական հատվածում արժեթղթերի և կապիտալի զարգացած շուկա ունենալու դերը և նշանակությունը, շարունակեց իր ներդրումն ունենալ արժեթղթերի շուկայի ակտիվացման և զարգացման գործում:

- 2017 թվականի ընթացքում Բանկը թողարկեց և ամբողջությամբ տեղաբաշխեց՝
- ✓ 5,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով 200,000 հատ, 25 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, տարեկան 5.75% եկամտաբերությամբ, 51 ամիս մարման ժամկետով չփոխարկվող, կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր:
  - ✓ 1,000,000,000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով 100,000 հատ, 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, տարեկան 9.5% եկամտաբերությամբ 24 ամիս մարման ժամկետով չփոխարկվող, կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր:
  - ✓ 5,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով 200,000 հատ, 25 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, տարեկան 5.5% եկամտաբերությամբ, 51 ամիս մարման ժամկետով չփոխարկվող, կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսեր:

Բանկի սեփական կապիտալը 2017թ վերջի դրությամբ կազմել է 35.2 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է 2.0 մլրդ ՀՀ դրամով կամ 6.1%-ով: Նախորդ տարվա համեմատ Բանկի ընդհանուր կապիտալի աճը պայմանավորված է Չբաշխված շահույթի 13% (2 մլրդ ՀՀ դրամ) աճով:

Հաշվետու տարվա զուտ շահույթը կազմել է 2.0 մլրդ ՀՀ դրամ:

Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները կազմել են.

*Կապիտալի շահութաբերություն (ROE)՝ 5.9%,*

*Ակտիվների շահութաբերություն (ROA)՝ 1.1%:*

### **Ռիսկերի կառավարումը**

Ռիսկերի կառավարման գործընթացները մշտապես գտնվում են Բանկի ուշադրության կենտրոնում: Բանկում մշտապես ուսումնասիրվում ու կիրառվում է միջազգային փորձը՝ բարելավելով ռիսկերի կառավարման համակարգի կանոնակարգումը՝ նպատակ ունենալով նվազագույնի հասցնել բոլոր ռիսկերը:

Ռիսկերի կառավարման գործընթացը կորրեկցիաներում են էտրիբուրը և Գործադիր մարմինը, իսկ ընթացիկ կառավարումն իրականացվում է Ռիսկերի կառավարման վարչության, Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովի, Գործառնական ռիսկերի կառավարման հանձնաժողովի, Վարկային

ռիսկերի կառավարման հանձնաժողովը, վարկային կոմիտեների և բանկի այլ ստորաբաժանումների կողմից:

Ռիսկերի կառավարման նկատմամբ ընդհանուր հսկողությունն իրականացվում է բանկի Խորհրդի կողմից:

Բանկի գործադիր մարմինն իրականացնում է ռիսկերի կառավարման գործընթացի նկատմամբ հսկողություն, ինչպես նաև հաստատում է վերջինիս վերաբերող իրավական ակտեր:

Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովը զբաղվում է իրացվելիության և շուկայական ռիսկերի կառավարման հարցերով:

Ռիսկերի կառավարման վարչությունը պատասխանատու է ռիսկերի գնահատման և վերլուծության համար, ինչպես նաև ռիսկերի կառավարման քննազավառը կարգավորող ներքին իրավական ակտերի մշակման համար:

Բանկում ռիսկերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2017 թվականին ստեղծվեց Վարկային ռիսկերի կառավարման հանձնաժողով, ինչպես նաև մշակվեց և հաստատվեց «Ռիսկի ախորժակի սահմանման» քաղաքականությունը: Վերջինս սահմանում է Բանկում բոլոր ռիսկերի համար սահմանված ռիսկերի ընդունելի մակարդակը, ռիսկի ախորժակով սահմանված գործողությունների պլանը և ռիսկերի զսպման ու հսկողության մեխանիզմները: Ռիսկի ախորժակի կառավարման խնդիրն է՝ հաշվի առնելով բոլոր շահագրգիռ կողմերի կողմից ընդունված ռիսկի մակարդակը, հասնել Բանկի կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակներին:

Բանկի նպատակային ռիսկի պրոֆիլը իրենից ներկայացնում է ներքին սահմանաչափերի համակարգ, որոնք հնարավորություն են ընձեռում հսկողություն իրականացնել Բանկի ռիսկի ախորժակի պահպանման նկատմամբ:

#### **Վարկային ռիսկ**

Վարկային ռիսկը Բանկի վարկառուների, փոխառուների և Բանկի նկատմամբ պարտավորություններ ստանձնած անձանց կողմից պայմանագրային պարտավորությունները ժամանակին և սահմանված չափով կամ մասամբ չկատարելու հավանականությունն է ինչը կարող է վնաս հասցնել Բանկի կապիտալին: Վարկային ռիսկի արդյունավետ կառավարումը Բանկի կարևորագույն խնդիրներից է:

Բանկում վարկային ռիսկը կառավարվում է առանձին վարկառուների և վարկային փաթեթի մակարդակներով: Վարկառուների գծով ռիսկի կառավարումն իրականացվում է ինչպես իրավաբանական և ֆիզիկական անձանց, այնպես էլ՝ ֆինանսական շուկայի մասնակիցների նկատմամբ:

Բանկում ներդրված վարկային ռիսկի կառավարման առարկա են հանդիսանում վարկային պորտֆելը և հետհաշվեկշռային վարկային ռիսկ կրող գործառնությունները: Վարկային ռիսկի կառավարման մեխանիզմներից է՝ վարկային ռիսկի ընդունման հետ կապված որոշումներ կայացնող կոլեգիալ մարմինների և

պաշտոնատար անձանց լիազորությունների ու պարտականությունների հստակ բաշխումը և տարանջատումը:

Վարկային ռիսկը Բանկի հիմնական ռիսկերից է, այդ պատճառով էլ Բանկն այն վերահսկում է առանձնակի ուշադրությամբ: Վարկային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ՝ վարկերի և փոխատվությունների տրամադրում, և ներդրումային գործունեության հետ՝ Բանկի ակտիվների պորտֆելի մեջ պարտքային արժեթղթերի և այլ պարտքային գործիքների ավելացում: Ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները:

Վարկեր տրամադրելիս Բանկը մեծ կարևորություն է տալիս վարկառուի նախկինում ունեցած վարկերի սպասարկման պատմությանը, կայուն եկամուտների առկայությանը, մասնագիտական պատրաստվածությանը, քանզի նպատակ ունենալով ձևավորել որակապես կայուն վարկային պորտֆել, վարկերը հնարավորինս բարձր իրացվելի գրավով ապահովված լինելու փաստից բացի, առաջնային նշանակություն ունի նաև վարկառուի պարտաճանաչությունը և վճարունակությունը:

Վարկային ռիսկի կառավարումն իրականացվում է հետևյալ ուղղություններով.

⌘ Վարկային ռիսկի սահմանափակում՝ Բանկում գործող սահմանաչափերի միջոցով,

⌘ Վարկային ռիսկի նկատմամբ հսկողություն՝ վարկառուների գնահատման միջոցով ինչպես վարկային պորտֆելի, այնպես էլ առանձին վարկառուների և ապահովության միջոցների նկատմամբ մոնիտորինգի իրականացման միջոցով,

⌘ Վարկային ռիսկի կանխարգելում վարկային գործերը քննարկելու փուլում և համապատասխան միջոցառումների կիրառում հետագա մոնիտորինգի ժամանակ ռիսկի գործոնների հայտնաբերման դեպքում,

⌘ ապահովվածության միջոց հանդիսացող գույքի պարբերաբար գնահատում:

2017 թվականի ընթացքում Բանկը, ռիսկերի կառավարման ռազմավարության շրջանակներում, ներդրեց Վարկերի ուսումնասիրության սքորինգային համակարգ և նոր մոտեցումներով սթրես թեստեր, իրականացրեց ռիսկերի վրա հիմնված մոնիտորինգի գործառնություններ, վերանայեց «Վարկերի ընթացիկ հսկողության (մոնիտորինգի)» կարգը:

Բանկի կողմից վարկային ռիսկի վերահսկողության արդյունավետության և հուսալիության մասին է վկայում նաև հաշվետու տարվա ընթացքում կատարված ռիսկային պորտֆելի դասակարգումը:

Վարկային ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով բանկը կարևորում է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիան, հսկողություն սահմանում տարբեր տեսակի կենտրոնացումների վրա, վարկավորելիս որպես ապահովվածություն նախապատվություն է տալիս վարկառուի վարկունակությանը և

վճարունակությանը, ինչի շնորհիվ խնդրահարույց վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում բավականին փոքր է:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջում վարկային պորտֆելի 98.8%-ը ստանդարտ վարկեր են, որոնք վկայում են վարկային ռիսկի կառավարման գործուն համակարգի մասին:

### **Իրացվելիության ռիսկ**

Իրացվելիության ռիսկը, պայմանավորված բնականոն և սթրեսային իրավիճակներում Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ, առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնությունը և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ոչ ամբողջական համապատասխանությունը բնական է ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնաս կրելու ռիսկը:

Իրացվելիության ռիսկերի կառավարման նպատակով Բանկում ներդրվել են սահմանաչափերի պահպանման և ամենօրյա կտրվածքով հսկողության իրականացման մեխանիզմներ: Բանկում իրականացվում են ընթացիկ, կարճաժամկետ և երկարաժամկետ իրացվելիության ռիսկի կառավարում, իրացվելիության ճեղքվածքի և բացասական ազդեցության սցենարային վերլուծություններ:

Բանկի իրացվելիության երկարաժամկետ կառավարումն իրականացվում է՝ Բանկի վարչության կողմից ռեսուրսների ներգրավման և միջոցների տեղաբաշխման վերաբերյալ որոշումներ կայացնելով:

Իրացվելիության ռիսկի կարճաժամկետ կառավարման գործառույթներն իրականացնում է Բանկի Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովը, որը կանխատեսված դրամական հոսքերի ճեղքվածքի դեպքում, համապատասխան միջոցներ է ձեռնարկում լրացուցիչ միջոցներ ներգրավելու կամ ավելցուկային իրացվելիությունը տեղաբաշխելու ուղղությամբ: 2017թ. ընթացքում տեղի է ունեցել Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովի 12 նիստ, որոնց ժամանակ հաստատվել է նաև ընդհանուր բազային տոկոսադրույքը՝ ըստ արժույթների:

Իրացվելիության ռիսկի ընթացիկ կառավարումն իրականացվում է Բանկի Գործադիր տնօրենի առաջին տեղակալի կողմից՝ փողի շուկայի գործիքակազմի կիրառմամբ: Իրացվելիության ռիսկի շրջանակներում Բանկը կարևորում է նաև վարակի ռիսկը, որը կարող է ի հայտ գալ ՀՀ բանկային համակարգում որևէ Բանկի սնանկացման հետևանքով:

Բանկում ներդրված է իրացվելիության ճգնաժամային կառավարման մեխանիզմ, որը օգտագործվում է իրացվելիությանը սպառնացող անկանխատեսելի իրավիճակներում, մասնավորապես սահմանված ցուցանիշների և արտաքին գործոնների բացասական ազդակների դեպքերում: 2017 թվականին Բանկի կողմից վերանայվեց «Իրացվելիության ռիսկի կառավարման» կարգը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման ընթացքում պահպանվում են Բանկի Խորհրդի կողմից սահմանված սահմանաչափերն, ինչպես նաև պարբերաբար իրականացվում են սթրես թեստեր:

### **Տոկոսադրույքի ռիսկ**

Տոկոսադրույքի ռիսկը հանդիսանալով Բանկի զուտ շահույթի վրա ուղղակի ազդեցություն ունեցող ռիսկ, մշտապես գտնվում է Բանկի ուշադրության կենտրոնում: Շուկայական տոկոսադրույքների փոփոխությունները կարող են ազդել Բանկի ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի վրա: Նման տատանումները տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում կարող են ինչպես ավելացնել, այնպես էլ նվազեցնել տոկոսային մարժան՝ հանգեցնելով էական վնասների:

Բանկում տոկոսադրույքի կառավարման նպատակով իրականացվում են նաև բազիսային, եկամտաբերության կորի փոփոխության և ժամկետային անհամապատասխանության ռիսկերի գծով վերլուծություններ:

Տոկոսադրույքի ռիսկի սահմանափակման համար գործում են Բանկի Խորհրդի կողմից սահմանված սահմանաչափեր, որոնց նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովը:

### **Արտարժույթային ռիսկ**

Հաշվի առնելով ՀՀ-ում տնտեսական, քաղաքական զարգացումները և բանկային համակարգի ներկա վիճակը, Բանկի զգուշավոր քաղաքականությունը և Բանկ-Հաճախորդ գործարար հարաբերությունների ներկայիս դրսևորումները Բանկում արտարժույթային ռիսկի ի հայտ գալու հավանականությունը հասցվում է նվազագույնի:

Բանկում ներդրված արտարժույթային ռիսկի կառավարման հիմնական մոտեցումներն են.

↳ Արտարժույթային դիրքի կառավարում, որն իրականացվում է բաց դիրքի նկատմամբ՝ Բանկի Խորհրդի կողմից հաստատված սահմանաչափերը պահպանելով,

↳ Արտարժույթային պարտավորությունները ձևավորվում են՝ ելնելով արտարժույթային ակտիվների նկատմամբ պահանջարկից,

↳ սթրես թեստերի իրականացում, ինչն իրականացվում է հաշվի առնելով արտարժույթի փոխարժեքի տատանման, ինչպես նաև դիրքի փոփոխության տարբեր սցենարներ:

Արտարժույթային ռիսկի գնահատման համար Բանկն օգտագործում է ՎաՌ մեթոդաբանությունը (որոշակի հավանականությամբ արտարժույթի փոխարժեքի



տատանման հետևանքով Բանկի կրեդիթ վնասը), ինչն իրականացվում է ամսական կտրվածքով:

**Գործառնական ռիսկ**

Գործառնական ռիսկը, Բանկի գործունեության կազմակերպման ընթացքում օգտագործվող տեխնոլոգիաների, տեղեկատվական համակարգի, աշխատակիցների ոչ համարժեք գործողությունների կամ սխալների, ինչպես նաև արտաքին միջավայրի ազդեցության հետևանքով, Բանկի կողմից վնասներ կրելու ռիսկն է: Գործառնական ռիսկի հետևանքով կարող է վտանգվել նաև Բանկի համբավը:

Բանկում գործում է Գործառնական ռիսկերի կառավարման հանձնաժողով, որի նպատակն է գործառնական ռիսկի դեպքերից բխող ռիսկերի ի հայտ գալու զսպումն ուղղված միջոցառումների կիրառումը կամ դրանց վերաբերյալ առաջարկների ներկայացումը:


Գործառնական ռիսկերի գնահատման և մոնիտորինգի համար Բանկում գործում է ռիսկային պատահարների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման համակարգը: Գործառնական ռիսկերի գնահատումն իրականացվում է առկա և պոտենցիալ վնասի հաշվարկման, ինչպես նաև ռիսկերի քարտեզի միջոցով:

Բանկում ներդրված գործառնական ռիսկերի կառավարման համակարգի համաձայն գործառնական ռիսկի նույնականացման համար յուրաքանչյուր ստորաբաժանումում ընտրված է պատասխանատու աշխատող:

Բանկում, կարևորելով գործառնական ռիսկի զսպման և արդյունավետ կառավարման հանգամանքները, մշտապես քննարկվում են գործառնական ռիսկի կառավարման կատարելագործման նոր մոտեցումների ներդրման հարցեր, ուսումնասիրվում են միջազգային կազմակերպությունների լավագույն փորձն ու մոտեցումները:

ԱՐԱՐԱՐՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի անդամներ՝

Վ. Ղազարյան



Ա. Սուվարյան

